

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 19-06-2023 թ. որոշմամբ
«ՄԻԿՐՈ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Ց ՈՒ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՄԻԿՐՈ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Հ.ԿԱԼԵՆՑԻ 11	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.00352	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2000-04-18	
1.5 ՀՎՀՀ-ն	02552379	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)11270000	
	+(374)98791616	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.mdf.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	info@mdf.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արամ Չաղրյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ստացված վարձավճարներ անշարժ և շարժական գույքի վարձակալությունից, բանկերում ներդրված ավանդների և այլ բանկային հաշիվների մնացորդների դիմաց ստացված տոկոսագումարներ	19,215,746

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	9,605,864	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

Սույն հաշվետվության 12-րդ կետում նշված ֆինանսական տարում օգտագործված 9,605,864 ՀՀ դրամը ներառում է անձնակազմի գծով ծախսերը, այլ վարչական ծախսերը, արտաքին աուդիտորական ծառայության վճարը, վճարված հարկերն ու այլ պարտադիր վճարները: Հիմնադրամը 2022թ.-ի ընթացքում չի իրականացրել ծրագրեր համապատասխան ֆինանսավորման բացակայության պատճառով:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 58 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամ

Չամախմբված ֆինանսական հաշվետվություններ

*2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	1
Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	2
Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	4

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն	5
2. Պատրաստման հիմունքներ	6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր	7
4. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ	21
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22
6. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22
7. Հաճախորդներին տրված վարկեր	23
8. Հիմնական միջոցներ, ոչ կյուբական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	33
9. Հարկում	35
10. Այլ ակտիվներ	36
11. Վարկեր և փոխառություններ	37
12. Այլ պարտավորություններ	37
13. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	38
14. Չուտ տոկոսային եկամուտ	38
15. Արտարժույթային գործառնություններից զուտ օգուտ/(վնաս)	38
16. Վարկային կորուստների գծով հակադարձում/ (ծախս)	39
17. Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսեր	39
18. Վարչական ծախսեր	39
19. Ռիսկերի կառավարում	40
20. Իրական արժեքի չափումը	49
21. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում	50
22. Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն	51
23. Գործարքներ կապակցված կողմերի հետ	51
24. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն	52
25. Կապիտալի համարժեքություն	53

Անկախ աուդիտորական եզրակացություն

Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամի
Յոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և իր դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների խորհրդի (ՀԵՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԵՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԵՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Խմբի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի մայիսի 23-ին արտահայտել է չճանաչված կարծիք:

Ղեկավարության և Յոգաբարձուների խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՅՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է իմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան ղեկաբերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և իմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն ղեկաբերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել խումբը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Յոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է իմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- ▶ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ▶ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե իմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:



Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

- ▶ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- ▶ եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել իմքի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել իմքի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- ▶ ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ իմքի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք իմքի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջակալի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ և Կանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն,
Աուդիտի բաժնի գործընկեր՝



Էրիկ Հայրապետյան

16 հունիսի, 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	231,835	499,353
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6	1,106,417	1,256,855
Հաճախորդներին տրված վարկեր	7	13,710,914	12,992,826
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	8	366,837	431,307
Հետաձգված հարկային ակտիվներ	9	43,054	127,028
Այլ ակտիվներ	10	150,431	171,471
Ընդամենը ակտիվներ		15,609,488	15,478,840
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Վարկեր և փոխառություններ	11	8,210,823	8,549,891
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	9	33,832	-
Այլ պարտավորություններ	12	284,700	362,461
Ընդամենը պարտավորություններ		8,529,355	8,912,352
Չուտ ակտիվներ		7,080,133	6,566,488
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		15,609,488	15,478,840

Ստորագրվել և վավերացվել է Հիմնադրամի ղեկավարության կողմից՝

Արամ Չաղոյան



Տնօրեն

Արմինե Կիրակոսյան

Հիմնադրամի հաշվապահական հաշվառումը
վարող «ԱՐՄ ԸԲԱՈՒՆԹԻՆԳ» ՍՊԸ, տնօրեն

16 հունիսի, 2023թ.

**Ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների
մասին համախմբված հաշվետվություն**

2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ.(վերադասակարգված)
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	14	2,119,957	1,897,660
Տոկոսային ծախս	14	(609,414)	(498,722)
Չուտ տոկոսային եկամուտ	14	1,510,543	1,398,938
Վարկային կորուստների գծով հակադարձում / (ծախս)	16	381,899	(256,654)
Չուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով հակադարձումից/ ծախսից հետո		1,892,442	1,142,284
Արտարժույթային գործառնություններից զուտ օգուտ/(վնաս)	15	6,211	(71,807)
Այլ գործառնական եկամուտ		21,666	25,899
Ոչ տոկոսային եկամուտ/(վնաս)		27,877	(45,908)
Անձնակազմի գծով ծախսեր	17	(890,602)	(838,923)
Այլ գործառնական ծախսեր	17	(44,396)	(33,352)
Վարչական ծախսեր	18	(353,870)	(362,652)
Ոչ տոկոսային ծախսեր		(1,288,868)	(1,234,927)
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ		631,451	(138,551)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	9	(117,806)	9,489
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)		513,645	(129,062)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)		513,645	(129,062)

1-ից 25 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

**Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	<u>Չուտ ակտիվներ</u>
Մնացորդը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	<u>6,695,550</u>
Տարվա արդյունք	<u>(129,062)</u>
Մնացորդը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	<u>6,566,488</u>
Տարվա արդյունք	<u>513,645</u>
Մնացորդը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	<u><u>7,080,133</u></u>

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		2,108,293	1,920,912
Վճարված տոկոսներ		(572,537)	(461,406)
Չուտ մուտքեր արտարժույթով գործառնականություններից		6,478	2,015
Չուտ վճարված այլ ծախսեր		(35,204)	(7,453)
Աշխատակազմին վճարված գումարներ		(882,117)	(765,886)
Վճարված վարչական ծախսեր		(211,313)	(273,518)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		413,600	414,664
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/սվազում			
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		155,621	(1,201,610)
Հաճախորդներին տրված վարկեր		(546,721)	(646,805)
Այլ ակտիվներ		21,368	(14,258)
Գործառնական պարտավորությունների զուտ (աճ)/(սվազում)			
Այլ պարտավորություններ		(64,393)	(25,155)
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում մինչև շահույթահարկը		(20,525)	(1,473,164)
Վճարված շահույթահարկ		-	-
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում		(20,525)	(1,473,164)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	8	(32,027)	(86,768)
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում		(32,027)	(86,768)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր	25	2,240,156	5,383,066
Վարկերի և փոխառությունների մարում	25	(2,149,810)	(3,160,760)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	25	(69,775)	(75,825)
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ ֆինանսավորման գործունեությունից		20,571	2,146,481
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(235,537)	(137,161)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (սվազում)/աճ		(267,518)	449,388
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում	5	499,353	49,965
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	5	231,835	499,353

1-ից 25 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

(հազար ՀՀ դրամ)

1. Հիմնական գործունեության նկարագրություն

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և վերջինիս դուստր ընկերության (միասին՝ Խումբ) ֆինանսական հաշվետվությունները: Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամը ոչ պետական կազմակերպություն է, որը հիմնադրվել է «Փրկեք երեխաներին» կազմակերպության կողմից և գրանցվել է որպես շահույթ չհետապնդող բարեգործական կազմակերպություն ՀՀ արդարադատության նախարարությունում 2000թ. ապրիլին:

Խումբն ունի մեկ դուստր ընկերություն՝ «ԿԱՄՈՒՐՏ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ն, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2010թ. մարտի 22-ին: Դուստր ընկերությունը վարկային կազմակերպության լիցենզիա է ստացել ՀՀ կենտրոնական բանկից 2010թ. ապրիլի 27-ին: 2012թ. հունվարի 30-ին «ԿԱՄՈՒՐՏ» ՈւՎԿ ՍՊԸ-ի վերակազմավորման արդյունքում ստեղծվել է «ԿԱՄՈՒՐՏ» ՈւՎԿ ՓԲԸ-ն: Դուստր ընկերությունն իր գործունեությունը ծավալում է գլխամասում և 16 մասնաճյուղերում, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Կալենցի փ. 11: Խմբի ակտիվները և պարտավորությունները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

Հիմնադրամի գործունեությունը վերահսկվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից, որը բաղկացած է հինգ անդամից, որոնք, Հիմնադրամի կանոնադրության համաձայն, ընտրվում են նախապես սահմանված տարբեր ժամանակահատվածներով՝ Հոգաբարձուների խորհրդի այլ անդամների կողմից: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հոգաբարձուների խորհրդի անդամներն էին՝ Դավիթ Նահապետյանը (նախագահ), Արթուր Բաղայանը, Արմեն Հայրապետյանը, Բագրատ Բաղայանը և Ազատ Գաբրիելյանը: Հիմնադրամը չունի վերջնական վերահսկող կողմ:

Հիմնադրամի գործունեության նպատակն է աջակցել միկրո և փոքր ձեռներեցությամբ զբաղվող անձանց, գյուղատնտեսական և սոցիալական ոլորտներին, մշակել փոխօգնության և սոցիալական փոփոխարարությունների հնարավորություններ, իրականացնել բարեգործական, աջակցման, նպատակային վարկավորման և զարգացման ծրագրեր:

Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իր իրավական, հարկային և կարգավորվող դաշտերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից ու զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից:

Ուկրաինայի հետ պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանը և Ուկրաինան Հայաստանի առանցքային առևտրային գործընկերներից են: Ակնկալվում է, որ պատերազմը նշանակալի ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա:

Պատերազմի արդյունքում տեղի է ունեցել ոչ ռեզիդենտների (հատկապես Ռուսաստանից) ներհոսք Հայաստան, ինչը նպաստել է Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից դրամական հոսքերի ծավալի զգալի ավելացմանը և պլաստիկ քարտերով գործառնությունների ակտիվացմանը, ինչը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա, ինչի արդյունքում ընդհանուր առմամբ գրանցվել է երկնիշ աճ և գնաճի բարձր մակարդակ: Հիմնադրամի ղեկավարությունը հետևում է տնտեսական ընթացիկ իրավիճակին: Զանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ հուսալիորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը կարող է այն ունենալ Հիմնադրամի գործունեության վրա, քանի որ ընդհանուր տնտեսության վրա դրա ազդեցության աստիճանի վերաբերյալ առկա է անորոշություն:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(հազար ՀՀ դրամ)

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ»), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ «ՀՀՄՍԽ») կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված ֆինանսական հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (այսուհետ՝ «ՖՀՄՍԿ»)։

Զափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի։

Գործառնական և ներկայացման արժույթ

Խմբի գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Խումբը։ Հիմնադրամի և իր դուստր ընկերության գործառնական և ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը։ Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ։

Ֆինանսական տեղեկատվությունը՝ դրամով արտահայտված, կլորացվել է մինչև ամենամոտ հազարերորդականը։

Վերադասակարգումներ

Որոշակի վերադասակարգումներ են կատարվել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում ընթացիկ տարում օգտագործված դասակարգմանը համապատասխանելու համար։ Ծանոթագրությունները համապատասխանաբար փոխվել են։

Այս վերադասակարգումները որևէ ազդեցություն չեն ունեցել նախկինում ներկայացված զուտ շահույթի կամ զուտ ակտիվների վրա։

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որոշ գումարներ վերադասակարգվել են։

	Նախկինում ներկայացված	Վերադասա- կարգում	Վերադասա- կարգված
Այլ գործառնական եկամուտ	80,326	(54,427)	25,899
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	1,843,233	54,427	1,897,660

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում որոշ գումարներ վերադասակարգվել են։

	Նախկինում ներկայացված	Վերադասա- կարգում	Վերադասա- կարգված
Ստացված տոկոսներ	1,866,485	54,427	1,920,912
Չուտ ստացված այլ եկամուտներ /(վճարված այլ ծախսեր)	46,974	(54,427)	(7,453)
Այլ պարտավորություններ	18,065	(43,220)	(25,155)
Վճարված շահութահարկ	(43,220)	43,220	-

Ի լրումն, Խումբը փոխել է ֆինանսական արդյունքների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որոշակի ենթագումարներ, որը հանգեցրել է վերադասակարգման համեմատական տեղեկատվության մեջ։

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

«Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)

Փոփոխությունները փոխարինում են ՀՀՄՍԻ-ի Հայեցակարգային հիմունքների նախորդ տարբերակին հղումը՝ միաժամանակ հղում կատարելով 2018 թվականի մարտին թողարկված ներկա տարբերակին՝ առանց դրա պահանջները էականորեն փոփոխելու:

Փոփոխությունները բացառություն են ավելացնում ՖՀՄՍ 3 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ ստանդարտում սահմանված ճանաչման սկզբունքին՝ խուսափելու համար «երկրորդ օրվա» հավանական շահույթի կամ վնասի խնդրից, որը բխում է այն պարտավորություններից և պայմանական պարտավորություններից, որոնք կներառվեն ՀՀՄՍ 37 Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ կամ ՖՀՄՍԿ 21 Պարտադիր վճարներ ստանդարտների շրջանակներում, եթե առաջանային առանձին: Բացառությունը պահանջում է, որ կազմակերպությունները կիրառեն ՀՀՄՍ 37-ում կամ ՖՀՄՍԿ 21-ում սահմանված չափանիշները, համապատասխանաբար, Հայեցակարգային հիմունքների փոխարեն՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ընթացիկ պարտավորության առկայությունը որոշելու նպատակով:

Փոփոխությունները նաև նոր պարբերություն են ավելացնում ՖՀՄՍ 3-ում՝ պարզաբանելու, որ պայմանական ակտիվները չեն համապատասխանում ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչման պայմանին:

Անցումային դրույթների համաձայն՝ Խումբը կիրառում է փոփոխությունները առաջընթաց սկզբունքով, այսինքն՝ այն ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ, որոնք առաջանում են տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբից հետո, երբ առաջին անգամ կիրառվում են փոփոխությունները (նախնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ ժամանակաշրջանի ընթացքում այս փոփոխությունների շրջանակներում չեն առաջացել պայմանական ակտիվներ կամ պայմանական պարտավորություններ:

Հիմնական միջոցներ – մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

Այս փոփոխությունը չի թույլատրում կազմակերպություններին հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում, որն անհրաժեշտ է դեկավարության կողմից նախանշված նպատակով այն գործարկելու համար, արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է տվյալ միավորների վաճառքից մուտքերը և տվյալ միավորների արտադրման նպատակով ծախսումները շահույթում կամ վնասում:

Անցումային դրույթների համաձայն՝ Խումբը կիրառում է այս փոփոխությունները հետընթաց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք մատչելի են օգտագործման համար ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ չի իրականացվել հիմնական միջոցներով արտադրված այդպիսի միավորների վաճառք, որոնք մատչելի են եղել ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ - Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեստում ներառվող վճարներ

Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ Էուրոյան տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ փոխառուի, կամ փոխատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Համանման փոփոխություն չի առաջարկվում ՀՀՄՍ 39 Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում ստանդարտի համար:

Անցումային դրույթների համաձայն՝ Խումբը փոփոխությունը կիրառում է այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար (սկզբնական կիրառման ամսաթիվ): Այս փոփոխությունները Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Խմբի ֆինանսական գործիքներում փոփոխություններ չեն կատարվել:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

Անբարենպաստ պայմանագրեր - Պայմանագրի կատարման ծախսեր – ՀՀՍՍ 37-ում փոփոխություններ

Պայմանագիրը համարվում է անբարենպաստ, եթե այդ պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսերը (այսինքն, այն ծախսերը, որոնք մասով խումբը չի կարող խուսափել, քանի որ պայմանագիրն առկա է) գերազանցում են դրա շրջանակներում ակնկալվող տնտեսական օգուտները:
Փոփոխությունները հստակեցնում են, որ պայմանագրի անբարենպաստ կամ վնասաբեր լինելը գնահատելիս, կազմակերպությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ինչպես լրացուցիչ ծախսերը (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և նյութերի ծախսերը), այնպես էլ պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերի բաշխումը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածությունը և պայմանագրի կառավարման և վերահսկողության ծախսերը): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում այդ ծախսերում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսերը հստակորեն գանձվում են պայմանագրի մյուս կողմից:

Այս փոփոխությունները որևէ եական ազդեցություն չեն ունեցել իմբի վրա:

Համախմբման հիմունքներ

Դուստր ընկերությունը, որի մայր կազմակերպությունը իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ելթարվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով, համախմբվում է: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը իմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվ է հանդիսանում դեկտեմբերի 31-ը:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն խումբ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն իմբից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները գեղում է ճշգրիտ մինչև:

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս խումբը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող վարկային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը ներառյալ ակնկալվող վարկային կորուստը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Եկամուտների և ծախսերի ճանաչում (շարունակություն)

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող վարկային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող վարկային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի վարկային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս 4 ծանոթագրությունում:

Այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Միջևորդավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, երբ ծառայությունը մատուցվում է:

Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը և ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության «արտարժույթային գործառնականություններից զուտ օգուտ» հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Յուրաքանչյուր գործառնական պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնականության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության «արտարժույթային գործառնականություններից զուտ օգուտ» հոդվածի «արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ» տողում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արտարժույթ (շարունակություն)

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	393.57	480.14
ՀՀ դրամ/1 Եվրո	420.06	542.61

Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են զուտ ակտիվներում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են զուտ ակտիվներում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուղվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող արդյունքի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա արդյունք, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության «Այլ ընդհանուր վարչական ծախսեր» հոդվածում:

Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սկզբնական չափում

Խումբը սկզբնապես ճանաչում է վարկերը դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը խմբի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին խումբը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով» շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորությունն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL)

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- Ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չափվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ խումբը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար: Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին խումբը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Խումբը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- Պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- Ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում խմբի ղեկավարությանը.
- Բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- Ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- Նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է խումբը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված վարկային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, խումբը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ խումբը դիտարկում է.

- Պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- Լծակավորման հատկանիշը,
- Վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- Պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ խմբի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- Հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ խումբը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Խումբը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով չափվող:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և ա) ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում խմբի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Այն դեպքերում, երբ խումբը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կամ բոլոր, կամ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ դրանց մի մասը, փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ապաճանաչում (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ

Խուճմբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Խուճմբը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը Եականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը Եականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս 4 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը Եականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Խուճմբը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ

Խուճմբը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ Եության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը համախմբված ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն գտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Խմբի առևտրային գործունեության ընթացքում:

Արժեզրկում

Խուճմբը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող վարկային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով: Ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով:

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Խուճմբը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ այն ֆինանսական գործիքների, որոնց համար վարկունակության ռիսկը Եականորեն չի աճել իրենց սկզբնական ճանաչումից ի վեր, որոնք համար հաշվարկվում է 12-ամսյա ակնկալվող վարկային կորուստներ:

12-ամսյա ակնկալվող վարկային կորուստները ակնկալվող վարկային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստները ակնկալվող վարկային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արժեզրկում (շարունակություն)

Ակնկալվող վարկային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող վարկային կորուստները հաշվարկվում են խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Խումբը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 20 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Խումբը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Խումբը ճանաչում է պահուստը 12- ամսյա ակնկալվող վարկային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում վարկային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է վարկային ռիսկի էական աճ, Խումբը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում վարկային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Խումբը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների պահուստ:

Ակնկալվող վարկային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության (PD), պարտազանցման պահին պարտքի գումարի (EAD), պարտազանցման դեպքում կորստի գումարի (LGD) գեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

- Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:
- Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքսի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեզրված տոկոսները:
- Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի (EAD) տոկոս:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը, և ակնկալվող վարկային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- Եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ գեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արժեզրկում (շարունակություն)

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ խումբը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- Փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- Պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Խմբի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- Հավանականությունը, որ փոխառուն կսնկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,
- Ակտիվների խմբի վերաբերյալ դիտարկելի տվյալներ, ինչպիսիք են փոխառուների կամ թողարկողների վճարունակության վատթարացումը կամ տվյալ փոխառուների կամ թողարկողների պարտազանցման հետ կապված տնտեսական պայմանները:

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Ակնկալվող վարկային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ - ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,
- Փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով.
 - Փոխատվության հանձնառությունների չօգտագործված մասի գծով ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատման ժամանակ, խումբը գնահատում է փոխատվության հանձնառության ամբողջ ժամկետի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակնկալվում է օգտագործել: Ակնկալվող դրամական պակասորդները գեղջվում են վարկի ակնկալվող վարկային կորուստների մոտավոր հաշվարկով:
 - Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և խումբը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող վարկային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող վարկային կորուստներից առանձին՝ խումբը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և:
 - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ խմբի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող վարկային կորուստների պահուստը: Կրճատումները գեղջվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող վարկային կորուստները ճանաչվում են պահուստներում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Արժեզրկում (շարունակություն)

Դուրսգրում

Վարկերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ խումբը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ խմբի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են կանխիկ դրամից և ընթացիկ հաշիվներից: Դրամական միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում խումբն օգտագործում է բանկերում տարբեր ժամկետայնության ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով ավանդներն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

Հաճախորդներին տրված վարկեր

Վարկերը և փոխատվությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են խմբի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում խումբը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- Պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կամ հստակ սահմանված է պայմանագրում, կամ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի խմբին,
- Խումբն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Խումբն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Խումբն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Վարձակալություն (շարունակություն)

Վարձակալության ճանաչում և չափում

Խուճըն որպես վարձակալ

Խուճըն ունի վարձակալություններ իր մասնաճյուղերի համար: Բացառությամբ փոքրարժեք ակտիվների վարձակալության՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Խուճըն հետևողական կերպով դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները հիմնական միջոցներին (տես ծան. 8):

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խուճըն պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Խուճըն կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հասած ստացված ցանկացած խրախուսումները):

Խուճըն հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Խուճըն նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Խուճըն չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Խմբի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ ըստ Էուբյան հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ Էուբյան հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Խուճըն կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Խուճըն սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը`

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	1-7	100.0-14.3
Գրասենյակային գույք	5	20.0
Կապիտալ ներդրումներ վարձակալած հիմնական միջոցներում	2-10	50.0-10.0
Տրանսպորտային միջոցներ	5	20.0

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս` դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները` ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի խումբ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով:

Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության 1-ից 10 տարիների ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Խումբը անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներ չունի:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով` ներառելով գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո վարձակալի կողմից օգտագործման իրավունքի ձևով պահվող ներդրումային գույքը չափվում է ինքնարժեքի մոդելով` ՀՀՄՍ 16-ի նախատեսված կարգով:

Ներդրումային գույքից ստացված վարձակալական եկամուտը և գործառնական ծախսերը ներառված են համապատասխանաբար հասույթում և այլ ծախսերում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Բռնագանձված ակտիվներ

Խմբի քաղաքականությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե՛ պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց համապատասխան ակտիվների դաս սկզբնական ապահովված ակտիվի բռնագանձված կամ հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքն ավելի լավ տարբերակ է ճանաչվում, ըստ Խմբի քաղաքականության՝ փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը:

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Խմբի քաղաքականությունն է կանոնավոր կերպով հետախուզել իրենց բռնագանձված ակտիվների ժամանակին իրացմանը: Խումբը սովորաբար ոչ դրամային բռնագանձված ակտիվները չի օգտագործում սեփական գործունեության համար:

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը գեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով գեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը:

Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Վարկեր և փոխառություններ

Ներգրված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ բանկերի, միջազգային և այլ ֆինանսական կազմակերպությունների վարկերը և փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Խմբի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Խումբը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր

2017թ. Մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 17 “Ապահովագրության պայմանագրեր”, համապարփակ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտը, որը նախատեսված է ապահովագրական պայմանագրերի համար՝ ներառելով ճանաչումը, չափումը, ներկայացումը և բացահայտումը: Ուժի մեջ մտնելուց հետո, ՖՀՄՍ 17-ը կփոխարինի ՖՀՄՍ 4 “Ապահովագրության պայմանագրեր” ստանդարտին, որը թողարկվել է 2005թ.: ՖՀՄՍ 17-ը կիրառելի է ապահովագրական պայմանագրերի բոլոր տեսակներին (ներառյալ՝ կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն, ուղղակի ապահովագրություն և վերաապահովագրություն), անկախ ապահովագրություն տրամադրող կազմակերպության տեսակից, ինչպես նաև կիրառելի է որոշակի երաշխիքների և հայեցողական մասնակցության հատկանիշներով ֆինանսական գործիքների դեպքում: Կիրառելի կլինեն որոշ բացառություններ: ՖՀՄՍ 17-ը սահմանում է հաշվապահական հաշվառման նոր պահանջներ ապահովագրական հատկանիշներով բանկային պրոդուկտների նկատմամբ, իսկ այդ պահանջները կարող են ազդել որոշելու վրա, թե որ գործիքները կամ դրանց բաղադրիչները կներառվեն ՖՀՄՍ 9-ի կամ ՖՀՄՍ 17-ի շրջանակներում:

Կրեդիտ քարտեր և համանման պրոդուկտներ, որոնք ապահովագրական ծածկույթ են ապահովում. թողարկողներից շատերը կարող են շարունակել կիրառել առկա հաշվապահական մոտեցումը՝ որպես ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական գործիք: ՖՀՄՍ 17-ը իր շրջանակից բացառում է կրեդիտ քարտերի պայմանագրերը (և այլ նմանատիպ պայմանագրերը, որոնք տրամադրում են կրեդիտային կամ վճարային պայմանավորվածություններ), որոնք համապատասխանում են ապահովագրության պայմանագրի սահմանմանը, միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս չի արտացոլում առանձին հաճախորդի հետ կապված ապահովագրական ռիսկի գնահատումը:

Երբ ապահովագրական ծածկույթը տրամադրվում է որպես կրեդիտ քարտի պայմանագրային պայմանների մաս, թողարկողը պարտավոր է՝

- ▶ Առանձնացնել ապահովագրության ծածկույթը և դրա նկատմամբ կիրառելի ՖՀՄՍ 17,
- ▶ Այլ բաղադրիչների նկատմամբ գործադրել այլ կիրառելի ստանդարտներ (օրինակ՝ ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15 - Հասույթ գնորդների հետ պայմանագրերից կամ ՀՀՄՍ 37 - Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ):

Վարկային պայմանագրերը, որոնք համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, բայց ապահովագրական իրադարձությունների փոխհատուցումը սահմանափակում են այն չափով, որն այլապես պահանջվում է ապահովագրի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունը մարելու համար - այդպիսի վարկերի թողարկողները, օրինակ՝ մահվամբ կասեցվող վարկերը, ունեն տարբերակ կիրառելու ՖՀՄՍ 9-ը կամ ՖՀՄՍ 17-ը: Ընտրությունը կատարվում է պորտֆելի մակարդակով և համարվում է անփոփոխ:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ.-ի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ պահանջելով համեմատական տվյալներ: Վաղ կիրառումը թույլատրելի է այն պայմանով, որ կազմակերպությունը նաև կիրառում է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 17 առաջին անգամ կիրառելու ամսաթվին կամ դրանից առաջ:

Ներկայումս խուլված գտնվում է իր ֆինանսական հաշվետվություններին վրա ՖՀՄՍ 17-ի ընդունման ազդեցության գնահատման փուլում:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է:

Ակնկալվում է, որ փոփոխությունները Էական ազդեցություն չեն ունենա խմբի վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

*Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և
ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում*

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Եականության մասին դատողությունների կիրառում»), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ Եականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «Եական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն Եականության հայեցակարգը՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Զանի որ Գործնական Գուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության Եականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Խումբը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը՝ որոշելու, թե ինչ ազդեցություն կունենան դրանք Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վրա:

*Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12
փոփոխություններ)*

2021 թվականի մայիսին Խորհուրդը հրապարակել է ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները, որոնք ներառում են ՀՀՄՍ 12-ի համաձայն սկզբնական ճանաչման բացառությունների շրջանակը, այն այլևս չի կիրառվում այն գործարքների մասով, որոնք հանգեցնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների:

Փոփոխությունները պետք է կիրառվեն այն գործարքների համար, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Ինչպես նաև, ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում պետք է ճանաչվեն նաև հետաձգված հարկային ակտիվը (եթե առկա է բավարար հարկվող շահույթ) և հետաձգված հարկային պարտավորությունը՝ վարձակալության և ապագործարկման պարտավորությունների հետ կապված բոլոր նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Խումբը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունը:

4. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Խմբի հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Ղեկավարությունը կատարել է հետևյալ դատողությունները և գնահատումները, որոնք ունեն նշանակալի ազդեցություն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ (շարունակություն)

Ակնկալվող վարկային կորուստների հաշվարկմանը վերաբերող չափանիշների սահմանում

Խուճաբ սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի վարկային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող վարկային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը (տես ծան. 19):

ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստի գնահատումը ֆինանսական ակտիվների բոլոր դասերի համար պահանջում է դատողություն, մասնավորապես՝ ապագա դրամական հոսքերի գումարի և ժամանակի՝ արժեզրկման գծով վնասների որոշման և վարկային ռիսկի գզալի աճի գնահատման ժամանակ: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Խմբի՝ ակնկալվող վարկային կորուստների հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ (տես ծան. 19): ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են՝

- ▶ Կիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- ▶ ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- ▶ Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- ▶ Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար:

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հաճախորդներին տրամադրված վարկերի նկատմամբ ճանաչված ԱՎԿ պահուստը կազմել է 467,606 հազար ՀՀ դրամ (2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: 747,917 հազար ՀՀ դրամ): Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 7-ում:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	<u>2022թ.</u>	<u>2021թ.</u>
Ընթացիկ հաշիվներ բանկերում	219,375	463,507
Կանխիկ դրամական միջոցներ	12,460	35,846
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	<u>231,835</u>	<u>499,353</u>

Դրամական միջոցների և դրանց համարժեքների նկատմամբ ակնկալվող վարկային կորուստները Եական չեն և չեն բացահայտվում:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է «Ռիսկերի կառավարում» ծանոթագրություն 19-ում:

6. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	<u>2022թ.</u>	<u>2021թ.</u>
Ավանդներ բանկերում	1,107,980	1,260,775
Նվազեցում արժեզրկման գծով պահուստ	(1,563)	(3,920)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	<u>1,106,417</u>	<u>1,256,855</u>

Ավանդները կարճաժամկետ են, բայց մարման ժամկետները պարբերաբար վերանայվում և երկարաձգվում են:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով բոլոր մնացորդները դասակարգված են Փոկ 1:

(հազար ՀՀ դրամ)

